



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ժ. — ՇՐՋԱՆ ԺՁ.

1883

ՏԱՐԻ ԺՁ. ՀՈԿՏԵՄ. 31

ԿՐՕՆԱԿԱՆ

Դ.

ՅԻՍՈՒՍԻ ԺՆՈՒՆԻՐԸ՝ ՆՈՐ ԿՏԵԿԱՐԱՆ

ԷԻ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՍԿՋԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

Հին կտակարանը իւր բովանդակութեամբ մեզ արդէն յայտնի է: Հին կտակարանից մենք արդէն գիտենք թէ Հրէայք միշտ սպասումէին Մեսիայի գալստեանը՝ որ պէտք է ընկած մարդկութիւնը վերականգնէր եւ Խորայէլի թագաւորութիւնը հաստատելով՝ յաւիտեանս թագաւորէր բոլոր մարդկային ազգի վերայ:

Մեսիայի գալուստը պէտք է կատարուէր Յուդայի ցեղի իշխանութիւնը չըվերջացած (ՄՆՆ. ԽԹ. 10). Մեսիայն պէտք է լինէր Գաւթի սերնդից (Երեմ. ԻԳ. 5). Նա պէտք է կուսից ծրնուէր եւ Էմմանուէլ (ընդ մեզ Աստուած) կոչուէր (Եսայ. Է. 14.) Նա Բէթղեհէմում՝ պէտք է ծնուէր, իսկ Նորա գոյութիւնը աշ-

խարհի սկզբիցն (Միք. Ե. 2.): Ահա կանխասացութիւններն ու գուշակութիւնները Մեսիայի ծննդեան համար: Յուգայի թագաւորութեան անկմամբ թէեւ Հրէից թագաւորութիւնը վերջացել էր, եւ Անտիոքի Աելիւկեանց իշխանութեան մի գաւառ էր դարձել, բայց երկրի ներքին կառավարութիւնը դեռ Բորայելայցի իշխանների ձեռքով էր անօրինւում եւ օրէնքի սրբութիւնները անթերի կատարելու համար Մակարեանց նման բնախորհրդավորները ազգային ուժով ճակատամարտներ էին մղում Աելիւկեանց դէմ: Երբ որ Հռովմայեցիք ակրեցին փոքր Ասիային, Ագիպոսին եւ Պաղեստինին՝ Հրէից ազգային իշխանութիւնը բոլորովին վերջացաւ, եւ երկիրը չորս մասն բաժանուելով յանձնուեց չորս մարդոց՝ որոնք չորրորդապետ էին կոչուում (Ղուկ. Գ. 1—3.): Այդ ժամանակ արդէն լրացել էր Գանիէլ մարգարէի գուշակած եօթներորդների հաշիւը (Գանիէլ Թ. 26.):

Հրէաստանը արդէն Հռովմայեցւոց գաւառ էր, եւ երբոր Օգոստոս կայսրը կամենալով հռովմէական պետութեան հպատակների թիւը խմանալ հրամայեց աշխարհագիր կատարել այդ ժամանակ ծնուեց Յիսուս Քրիստոս Հրէաստանի Բէթղեհէմ քաղաքում:

Հերովդէսը, որ կամենում էր մարգարէների գուշակութիւնը իւր վերայ կատարուած համարել տալ, եւ մտադիր էր Մեսիա հռչակուել իւր իշխանութիւնը բոլոր Հրէաստանի վերայ տարածել աշխատելով. երբ որ լսեց Յիսուսի ծնունդը եւ բոլոր շարժումները, կասկածելով թէ Յիսուսը իւր թագաւորութիւնը կրիլի — որոշեց սպանել նորան, որին ազատեցին նորա ծնողքը, փախցնելով Ագիպոսս:

Հերովդէսը չէր միայն, որ մտածում էր Մեսիա հռչակուելի՝ այլ շատերը նոյն իրզն ունեցան՝ ինչպէս Յուգայ, Թելգաս եւլն:

Բոլոր իրանք իրանց մեսիա կարծողների հակառակ, Յիսուս որ իսկապէս Մեսիայն էր, երկրաւոր թագաւորութեան ձգտում բնաւ չունեցաւ. որովհետեւ երկրաւոր թագաւորութիւնը որչափ եւ զօրաւոր լինէր, ժամանակաւոր էր. իսկ Մեսիայի թագաւորութիւնը յաւիտենական էր, նորա օրէնքներն մշանջենապէս պէտք է թագաւորէին:

Յիսուս Հրէից ակնկալութեան հակառակ փոխանակ երկրաւոր իշխանութիւն վարելու եւ Բորայելայցւոց ազգը հաւաքելով՝

նոցա վերայ մարմնաւորապէս թագաւորելու, սկսաւ նոցա սրբոյն վերայ թագաւորել. Աստուծոյ օրէնքն ու արդարութիւնը քարոզելով, նոցա օրինազանցութիւնները պահարակելով, եւ նոցա թերահաւատութիւնը յանդիմանելով: Չարաչար պահարակումէր Հրէից առաջնորդներին՝ որոնք ծերերի աւանդութեանց համար Աստուծոյ օրէնքը զանցառութեան էին տալիս: Յիսուս իւր մկրտութիւնից յետոյ սկսեց իւր քարոզութիւնները եւ մինչեւ մկրտուիլը իւր ծնողաց հնազանդ մնալով աշխատումէր:

Մովսէսի խիստ օրէնքը պէտք է թագաւորէր մինչեւ Յիսուս Քրիստոս (Պործք Է. 37.) իսկ այնուհետեւ Քրիստոսի սիրոյ օրէնքը պէտք է թագաւորէր: Յիսուսի օրէնքի անփոփոխման գրուած է Մատթէոսի աւետարանի Ե. 2. Է. գլուխների մէջ: Այդ օրէնքները մարդուս վարքը այնքան ազնուացնում են, որ այլ եւս ճշմարտութիւնն ու արդարութիւնը պէտք է թագաւորէին աշխարհիս մէջ՝ եթէ հաւատացողները միայն լսող չլինէին, այլ եւ կատարող:

Այդ պատուէրների մէջ Փրկիչը քարոզում է որ մեր ներքինն ու արտաքինն համեմատ պէտք է լինին իրար: Մովսէսի եւ Յիսուսի օրէնքների համեմատութիւնը այն բանի մէջ է կայանում՝ որ Մովսէս՝ կատարուած յանցանքներն է խտաիւ դատապարտում, իսկ Յիսուս՝ յանցանքի ամենափոքր մասն անգամ՝ մտքովն անցնելը՝ արդէն դատապարտուած է համարում: Մովսէս սպանութիւնը դատաստանի պարտաւոր է համարում (Ել. Ի. 0ր. Ե.) իսկ Յիսուս՝ եղբոր վերայ տարապարտուց բարկանալն ու յիմար ասելը: Մովսէս շնութիւնը դատապարտում է իսկ Յիսուս մտքովն անգամ՝ այդ տեսակ բան անցկացնելը սրտումը արդէն կատարուած գործ համարելով՝ դատապարտում է: Մովսէս պատուիրում է կինը արձակել՝ արձակման թուղթ տալով (0ր. ԻԳ. 1.). Յիսուս պատուիրում է ու՛ր որ իր կինը առանց պռոնկութեան պատճառի կարճակի՝ արդէն ինքն կնոջ շնանալու պատճառ կրդառնայ եւ ու՛ր որ արձակուած կինը առնի՝ արդէն շնութիւն կրլինի արածը. (Մատ. Ե. 31.—32):

Մովսէս պատուիրում է սոււս չ'երգուել. եւ երգուելիս էլ Աստուծոյ անունով երգուել. (Ելից Ի. 7, Գեւ. ԺԹ. 12.): Իսկ Յիսուս պատուիրում է բնաւ չ'երգուել. այլ «այսն այս լինի եւ ոչ ոչ»: Մովսէսը վրէժխնդրութիւն է պատուիրում՝ աչքի տեղ՝ աչք:

ատամի տեղ՝ ատամ (Ել. ԻԱ. 24): Յիսուս ասումէ չարին հակառակ մի կենաք (Մատ. Ե.): Մովսէս պատուիրումէ սիրել ընկերին (Ղեւտ. ԺԹ. 18.): ու թշնամին ատել (Օր. ԻՊ.): Յիսուս պատուիրումէ թշնամուն սիրել, անիծողներին օրհնել եւլն:

Յիսուսի կեանքն ու քարոզութիւնը մի սքանչելի օրէնք է, որին եթէ հետեւին, արդէն լուսաւորուած ու փրկուած կըլինին մարդիկ:

Այն մարդիկը որոնք Յիսուսի երկրաւոր կեանքը ու նորա քարոզութիւնները գրեցին՝ կոչուեցին Աւետարանիչներ. եւ զօքա են — Մատթէոս, որ Յիսուսի Յարութիւնից շատ սակաւ յետոյ գրեց իւր աւետարանը երրայերէն լեզուով, այն հաւատացեալների համար, որոնք Հրէայ էին եւ թլլատուած. Մատթէոս աւելի ընդարձակ եւ պատմական ոճով է գրել իւր աւետարանը: Մարկոս՝ որ Յիսուսի Յարութիւնից 15 տարի յետոյ գրեց իւր աւետարանը եգիպտացւոց լեզուով՝ համառօտ գրեց. եւ իւր աւետարանը սկսումէ Յովհաննու քարոզութիւնից ու Յիսուսի բժշկութիւններից: Ղուկաս՝ որ Յիսուսի Յարութիւնից 17 տարի յետոյ գրեց իւր աւետարանը, քաղզէարէն գրեց ընդարձակ ոճով. այս աւետարանը հետաքրքիր է նաեւ մի քանի Հրէից կրօնական արարողութեանց նկարագրութեան եւ քաղաքական հանգամանքի նկատմամբ: Յովհաննէս՝ որ Յիսուսի Յարութիւնից 53 տարի յետոյ գրեց իւր աւետարանը յունարէն լեզուով, ինքն աւետարանիչը լինելով բուն երեւակայութեան տէր մարդ եւ Յիսուսի սիրելի աշակերտը, աստուածարանական ոճով է սկսում իւր աւետարանը եւ գեղեցիկ կերպով նկարագրումէ Յիսուսի գրութիւնն ու խօսքերը՝ նորա տազնապալից մասնութիւնից սկսած:

Այն զարմանալի համանմանութիւնը որ չորս աւետարանիչների գրուածոց մէջ երեւումէ Յիսուսի կեանքի եւ քարոզութեան պատմութեան նկատմամբ՝ համոզումն մարդուն, հաւատալ թէ բոլոր գրածները ճիշտ են, եւ պէտք է զարմանալ առաքեալների այն կենդանի սիրոյ վերայ զէպի իւրեանց Վարդապետը, որ նորա ամեն մի արարքն ու գործը տարիներով անմուռաւնալի են պահել իրանց մտքում:

Աստուածաշնչի այն մասը որ վերաբերումէ Յիսուսի երկրաւոր կեանքին եւ նորանից յետոյ է գրուած կոչվումէ Նոր Ատակա-

րան, որ բաժանուի մէջ ըստ այսմ. Ա. Աւետարան որ, պատմում է: Յիսուսի կեանքն ու քարոզութիւնը՝ եւ վերջանում է: Յիսուսի երկինք համբառնալով: Բ. Գործք Առաքելոց, որ նկարագրում է առաքելաների կեանքը՝ նոցա քարոզութեան ժամանակ. այլեւ առաջին հաւատացեալների ընկերական յարաբերութիւնները: Գ. Պօղոսի թղթերը, որոնք գրուած են զանազան քաղաքացիների վերայ, նոցա՝ իրանց քրիստոնէական պարտքը յիշեցնելու համար: Դ. Վաթուղիկեայց թուղթեր, որ ընդհանրական գըրուածքներ են, հաւատացեալներին իրանց հաւատոյ մէջ հաստատելու համար: Վաթուղիկեայց թղթերի հեղինակներն են առաքելալըն Յակովբ, Պետրոս՝ որ երկու թուղթ ունի, Յովհաննէս՝ որ երեք թուղթ ունի, Յուդա՝ որ մի թուղթ ունի. Վաթուղիկեայց թղթերի շարքում կարելի է դասել նաեւ Յովհաննու Յայանութիւնը՝ որ մարգարէական մի գրուածք է եւ ապագայի գուշակութիւն:

Հին Կտակարանի մէջ կան այնպիսի գրքեր՝ որ երկրորդական են համարվում եւ եկեղեցւոյ մէջ չեն կարգացվում, որպիսի են Հռութ, Եսթեր, Եզրաս եւլն: Իսկ Նոր Կտակարանի մէջ երկրորդական համարվում է Յովհաննու հանգիստը: Կան այնպիսի գրուածքներ էլ, որ թէեւ Յիսուսի աշակերտներինն են համարվում, բայց Աստուածաշունչի մէջ չեն մտած. օրինակ «Աւետարան մանկութեան Յիսուսի» եւլն:

Քրիստոնէական եկեղեցիին ընդունել է Հին եւ Նոր Կտակարանը: Երրորդ Հայերը ընդունեցին քրիստոնէութիւն, Աստուածաշունչի ընթերցանութիւնը կատարում էին յունարէնով եւ ասորերէնով: Ինչպէս որ Ս. Սահակ եւ Մեսրոպ սկսեցին հայկական թարգմանութիւնը: Առաջին թարգմանուած գիրքը «Առակացն» է: Ագրոց թարգմանութիւնը երկու անգամ կատարուեց, աւելի ըզգուշութեան համար. առաջին թարգմանութիւնից միայն մի քանի կտորներ կան ժամագրքի մէջ. իսկ այժմեան ամբողջ մեր Աստուածաշունչը երկրորդ անգամի թարգմանութիւնն է եւ համարվում է ընտրելագոյն թարգմանութիւն եւ թագուհի ամենայն թարգմանութեանց կոչուած է հայագէտ եւրոպացիներից: Կենք մի երկու կտոր առաջին եւ երկրորդ թարգմանութիւններից՝ համեմատութեան համար:

Ա. Բարգմանս-Բի-ն.

Այց արար ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանիցեն ինձ ամենայն ազգք:

Յարոյց մեզ զեղջիւր փրկութեան ի տանէ Գաւթի ծառայի իւրոյ:

Առնել զողորմութիւն առ հարսըն մեր և յիշել զկտակարանքս սրբութեան իւրոյ:

Վասն գթոյ ողորմութեան Տեառն Աստուծոյ մերոյ. որով երեւցաւ մեզ արեգակն ի բարձանց, լուսաւոր առնել զխաւար մեր: Ծագել զլոյս ի վերայ այնոցիկ, որք նստէաք ի խաւարի և ի ստուերս մահու. ուզել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան:

Յիսուս համբարձման ժամանակ պատուիրել էր իւր առաքեալներին երուսաղէմում սպասել Ա. Հոգու գալստեանը. եւ հրր որ Պենտեկոստէի կիւրակէ օրը առաքեալները հաւաքուած էին վերնատան մէջ, առաւօտեան երրորդ ժամին իջաւ Հոգին Սուրբ. եւ առաքեալները զօրութիւն ստացած՝ սկսան քարոզել. առաջին անգամ Պետրոս առաքեալը խօսեց: Յիսուս իւր առաքեալներին պատուիրել էր հաւատացեալներին մկրտել «Յանուն Հօր եւ Արդոյ եւ Հոգւոյն սրբոյ»: Արեմն այս էր առաքելոց հանգանակն. իսկ խորհրդական արարողութիւններն էին Ա. ապաշխարեին, Բ. մկրտին:

Երբ որ հաւատացեալները զեռ սակաւ էին, ամենայն բան հասարակաց էր. առաքեալներն էին ողորմութիւն մատակարարում, որ երբ տժգոհութեան առիթ տուեց, տասներկու առաքեալները ժողովելով՝ աշակերաներից եօթն հոգի ընտրեցին այդ պաշտօնի համար, որոնք կոչուեցին Սարկաւազներ. (Գործ. 2.) Առաքեալները սկզբում միայն հրէաներին էին քարոզում, ինչպէս Յիսուս պատուիրել էր. յետոյ Ա. Հոգւոյ ազդեցութեամբ սկսեցին հեթանոսներին էլ քարոզել. հրէայ հաւատացեալները

Բ. Բարգմանս-Բի-ն.

Ձի հայեցաւ ի խոնարհութեան աղախնոյ իւրոյ, զի ահայայս մահտէ երանեսցեն ինձ ամենայն ազգք:

Եւ յարոյց եղջիւր փրկութեան մեզ ի տանէ Գաւթի ծառայի իւրոյ:

Առնել ողորմութիւն ընդ հարս մեր և յիշել զուխտն իւր սուրբ:

Վասն գթութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ, որովք այց արար մեզ արեգակն ի բարձանց. երևել որոց ի խաւարի և ի ստուերս մահու նստէին. ուզել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան:

Թրիատութիւն ունենալով, գարշումէին անթրիատ հեթանոսներից, բայց առաքեալները առ ոչինչ համարելով Թրիատութիւնն ու անթրիատութիւնը՝ սկսեցին քարոզել Աստուծոյ խօսքը ամենայն տեղ եւ առաջին անգամ Անտիոք քաղաքում հաւատացեալները Բառնարասի եւ Պողոսի հետ քրիստոնեայ կոչուեցին. (Գործ. ԺԱ. 26:) Թրիատութեան խնդիրը երբոր ծանրացաւ, առաջին համագումար ժողով կայացաւ Երուսաղէմում ի ներկայութեան առաքելոց եւ երէցների ու վճռուեց Թրիատութեան խորհուրդն առ ոչինչ համարել քրիստոնէութիւնը հեթանոսների մէջ տարածելու համար: Այլեւ որոշեցին՝ որ հեթանոսութիւնից դարձած քրիստոնեայքը զգոյշ լինին զոհելուց, արիւններից ու պոռնկութիւնից: Նորահաւատ քրիստոնեաները Յիսուսի պատուէրը կատարելու եւ նորան յիշելու համար ժողովովումէին, եւ նա՝ որ առաքելութեան պատիւ ունէր կամ երէց էր, պատմելով ու քարոզելով Յիսուսի կեանքը՝ կատարումէր խորհրդական րնթրիքի յիշատակը՝ բեկանելով հացը (Ա. Կորն. Ժ. — ԺԱ.), որ շատ զգուշաբար պէտք է կատարուէր: Աղօթելու համար այր մարդիկ գլխաբաց, խի կին մարդիկ ծածկած գլխով պէտք է կանգնէին (Ա. Կորն. ԺԱ. 4—16):

Առաքելոց ժամանակով եկեղեցին կատարումէր հետեւեալ խորհուրդները.

Ա. Ապաշխարութիւն, Բ. Սկրտութիւն, Գ. Կրօշմ, (Գործ. Բ. 14—17: Դ. Հաղորդութիւն՝ հրապարակական աղօթքով, բեկմամբ հացին, Ե. Ձեռնադրութիւն, որով կարգումէին առաքեալները երէցներ՝ Քրիստոսի խօսքը քարոզելու եւլն. Զ. Ամուսնութիւն, որ հաստատեց Աստուած եւ նուիրագործեց Յիսուսի վարդապետութիւնը աւանդելով, որ Աստուած զուգեաց՝ մարգ մի մեկնեսցէ. Է. Օծումն հիւանդաց, ինչպէս պատուիրումէ Յակոբ առաքեալը:

Առաքելոց ժամանակով եկեղեցին ունէր հետեւեալ կազմակերպութիւնը ըստ վարչական մասին.

Ա. Առաքեալք. որոնցից ամեն մինը իրանց քարոզութեամբ քրիստոնեայ դարձած հաւատացեալների եկեղեցւոյ ներկայացուցիչն էին.

Բ. Եպիսկոպոսներ — որոնք առաքեալներից կարգուած էին հսկել իրանց յանձնուած հաւատացեալների վերայ.

Գ. Երէցներ — որոնք պէտքէ Գրիստոսի խօսքը քարոզէին եւ
Ս. խորհուրդները մատակարարէին հաւատացեալներին.

Դ. Ասրկաւագներ, որոնք պէտքէ սպասաւորէին երէցներին:
Ս. Խորհուրդները ժողովրդեան մատակարարելու ժամանակ:

Առաքելոց ժամանակով Երուսաղէմում գումարած առաջին
ժողովի Ա. որոշումն էր թրիատուլթեան համար գայթակղու-
թեան տեղի չըտայ, այսինքն՝ հեթանոսներին բռնի չըթրիատել-
իսկ թրիատեալ հրէաներին չմերժել. որով թրիատուլթեան խոր-
հուրդը կորցրեց իւր նշանակութիւնը. Բ. որոշումն էր զգուշա-
նալ զոհեալները ուտելուց եւ առհասարակ հեթանոսական
ինչ ինչ անտեղի սովորութիւններից:

Յուսիկ Վարդապետ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՐՏԱՐՈՒԹԵԱՆ, ԱՐՇԵՍՏԻ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՄԱՌՈՑ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.

(Երբեք չպիտի մոռնանք որ աստուծոյ արարածն է մարդը) .

- 1300. Քլավիո Գիօյեան, Ալմաֆիացի ծովագնացը, հնարուձէ նաւային կողմնացոյցը, Այս պարզ գործիքի գործածութիւնով ծովագնացութիւնը նոր քայլ է անում՝ դէպի յառաջ, վասն զի զորանով ծովային ընդարձակ ճանապարհորդութիւններ սկսուեցին և հետեանքն եղաւ համաշխարհային վաճառականութեան լիակատար կերպարանափոխութիւնը:
- 1300. Հօլանդիայում և Ֆլանդրիայում ապխտումեն Հէրինգը սակայն հաւանական է որ ձուկն աղելու հմտութիւնը վաղածանօթ լինէր:
- 1300. Այդ ժամանակներում էր որ Իտալիայում մի քանի զանգակատների վրայ անիւաւոր ժամացոյցներ դրին, որոնք զարնուձէին ժամերը, Բանաստեղծ Գանտէն էլ առաջին անգամ յիշուձէ այդ մասին:
- 1300. Գիտնական Արնօլդ Բաբուօնկ—Փօն Վիլլանովայ Պատալօնիայում համարվում է օդիի գտնողը:
- 1300. Նիւրնբերգիայի ապրանքը հետզհետէ հոշակ է ստանում և աշխարհիս ամեն կողմերում տարածվում է: